

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայրապետն էր մեր առաջին,
Առաջինը, որ տեսլացավ միածնաէջ մեր արարչին—
Հրաշքների հրաշքին, որ իր ոսկեհուռ մուրճի վարկով
Շատրվանեց հայոց հողին տաճարն իր սուրբ հաղթանակով:

Վեհամեծար, աստվածատուր—հայրապետն էր մեր առաջին,
Որն հաստեց մեր կենաց երգը և կնիքը դրեց խաչին,
Միտքն էր նրա, որ հղացավ ու քարերով Արարատի
Այրարատյան հովտում հիմնեց այբուբենը մեր հավատի:

Անեղրական, աստվածատես—հայրապետն էր մեր առաջին,
Որն հավերժի իմաստն առավ մեծակառույց իր լույս աջին
Եվ կախեց իր կանթեղն անեղ գագաթն ի վար Արագածի՝
Աստղերն արծաթ, վառած մոմեր, կանթեղի մեջ արեգնածին:

Հայ առաջին ճարտարապետ—հայրապետն էր մեր առաջին,
Որն իր հոգու աչքերի մեջ ճառագայթեց գյուտը խաչի,
Բացեց դուռը երկինքների ու փրկության մեր բանալին
Կապեց հավետ մեր հավատքի անկիվելի ոսկե թելին:

Արշալույսով ոգեշնչված—հայրապետն էր մեր առաջին,
Որ լույսն երկնեց Խորվիրապի խորխորատում խավարչտին,
Մեկ ինքնության, իմաստության գերբ ու դրոշ տվեց անխախտ՝
Վրան գույներ ծիածանի ու արևը ամենահաղթ:

Մեր նահապետ, մեծ բանաստեղծ —հայրապետն էր, որ առաջին
Տեսավ բոլոր տեսիլքների տեսիլքը վեհ, աստվածածին,
Եղավ բոլոր մեր հայրերի աղոթքների երգ երգոցը,
Նախադուռը մեր առաջին ու հավատքի մեր Մաշտոցը:

Խորախորհուրդ ու հեռատես—հայրապետն էր մեր առաջին,
Որ թափանցեց երկինքների անհունի մեջ աստեղածին,
Ու տվեց մեկ հեռագնա, աստեղային սեր ու կարոտ,
Եթերային կապույտ ճամփա, կապույտ երակ ու առավոտ:

Ամենատես ու կորավար—հայրապետն էր մեր առաջին,
Որ փշրեց հին ու հեթանոս մեր հավատքի դուռը վերջին,
Դռներ բացեց, լուսամուտներ ու տաճարներ աստվածամերձ,
Զանգեր կախեց ու գմբեթներ՝ Մասյաց նման, փոքրիկ ու մեծ:

Քրիստոնյա ու մեծասքանչ—հայրապետն էր մեր առաջին,
Որ բիբլիական մեր լեռան դեմ երկնեց տաճարն Էջմիածին,
Իջման բեմին օծեց գահը, առաջինը պատարագեց
Եվ ուղղափառ մեր հավատքը օտարներից սրբապատեց:

Երկայնամիտ ու բազմախոհ—հայրապետն էր մեր առաջին,
Որ երկնքից ուրույն մի երգ իջեցրեց մեր հայոց հողին,
Եվ ամենայն հայոց Աթոռն օծեց հայոց հոգու գույնով
Եվ մեր հայոց հացն ու գինին շաղեց հայոց լույս մեռոնով:

Հայրենատենչ ու հայաշունչ—հայրապետն էր մեր առաջին,
Որ վերջ տվեց հալածանքին ու ձուլմանը մեր հայաջինջ.
Ու անշփոթ կնիքներով հայրենական խաչքարերի
Դաջեց անեղծ ճակատները մատյանների ու դարերի:

Խորվիրապի ու երկնքի—հայրապետն էր մեր առաջին,
Որ երկնքից երկիր բերեց անմահ հոգու մեր փրկիչին,
Եվ հիմնեց տունն իր լուսեղեն, ամենակոր ու փրկարար,
Որ պիտ ապրի հայալեզու, հավերժորեն, երկա՜ր, երկա՜ր...

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ